

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

621.396

Մ - 68

ՌԱԴԻ

ՕՐԱԿԱՐՏ

10 ԿՈՊԵԿ

10

ԿՈՊԵԿ

1929

## ՄԻԼԱՄՊԱՆԻ ՇԱՐԺԻԿ

Գոյություն ունեն բազմազան կոնստրուկցիալի շարժիկներ: Կան մեծ և բավական ծանր շարժիկներ, վորոնք ունեն բարձրախոս և կարող են ստանալ ուժեղ ընդունում: Կան գրպանի տիպի շարժիկներ, վորոնցով կարելի յե ընդունել տեղեափոնի միջոցով: Կան շարժիկներ, վորոնցով ընդունելու համար ընդունիչի հետ պետք ե մանածել շարժական անտենն: Կան և անանտենն շարժիկներ, վորոնք ընդունում են մի փոքրիկ շրջանակի միջոցով<sup>1)</sup>, վոր տեղավորված ե լինում նույն պայտուսակում, վորում դրված ե շարժիկը: Շարժիկների այս վերջին տիպն ամենահարմարն ե, վորովհետև ալդպիսի շարժիկով կարելի յե ընդունել հենց ճանապարհ գնալիս: Այն

1) Այս ել անտենն ե, բայց արկղի մեջ դրած: Ճ. Բ.

23.06.2013

04 AUG 2010

5-68


*Ար.*  
Եկողութիւնների ժամանակ, ամտանոց կամ  
գյուղ գնալիս և ալին:

Շարժիկի ընդհանուր տեսքը տրված է նկ. 1-ում.  
ինչպես կարելի լե տեսնել նկարից, շարժիկի  
բոլոր մասերը մեր կոնստրուկցիալում տեղա-  
փորված են մի փոքր պայուսակի ներսում. տե-  
ղի փոնի խողովակի նույնպես դրվում ե արկղում  
նրա համար պատրաստած հատուկ տեղում: Շար-  
ժիկի ալղպիսի կառուցումը մեծ հարմարություն  
ե ներկալացնում՝ տեղափոխվելիս, ճանապարհ  
գնալիս ընդունելու համար:

ԴԵՏԱԼՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՄՈՏԱՎՈՐ ԱՐԺԵՔԸ.

Զեռքի պայուսակ	30×20	սմ	5 ու.	— կ.
Փոփոխ.	պարունակման	կոնդենսատոր	3 » 50 »	
Բեռստատ	25 ոմ		1 » 20 »	
Պոտենցիոմետր	400—700	ոմ	1 » 60 »	
Հաստատուն պարունակման	կոնդենսա-			— » 60 կ.
Տ. 3 հատ				
Փոփոխիչ			— » 40 »	
Կոնտակտներ	15 հատ		— » 75 »	
Սեղմակներ	5 հատ		— » 75 »	
Դիմադրություն 1 մեգոմ <sup>1)</sup>			— » 20 »	
Ռեզորդուկտորի (բարձրախոսի) կոճ	1 »		— »	
Լամպի պանել			— » 40 »	
			Ընդամենը	15 ու. 40 կ.

1) Մեկ մեգոմ=1.000,000 ոմի: ծ. թ.



Նկ. 1.

Թլունն այն ե, վոր նրանով հնարավոր ե լսել  
ճանապարհ գնալիս՝ այն ե հեծանիվով, գնացքով,  
տրամվալով, ավտոմոբիլով և նավակով ճանապար-  
հորդելիս: Հասկանալի լե, վոր ալղպիսի շարժիկը  
մարդուս ամենալավ ուղեկիցն ե՝ զբոսանքների,

Միլամպանի շարժիկի տրժեքը, առանց լամպերի և մարտկոցների, կնսութի մոտ 15 ու:


Հսու ցանկության (և աշխատելու համապատասխան ընդունակության), այդ գումարը կարելի է զգալիորեն փոքրացնել, զնովի պայուսակի փոխարեն պատրաստելով ինքնաշեն ֆաների արկղ, համապատասխան չափսերի ու ձեի:

ՍՔԵՄԱՆ ՑԵՎ ՆՐԱ ԱԲԱՆՉԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նկ. 2-ում բերված ե միլամպանի շարժիկի պրինցիպիալ (սկզբունքային) սքեման. Ե-լերկացնց ՄԴԸ լամպն ե: L-ընդունող շրջանակն ե, վոր մինուլին ժամանակ ծառայում ե վորպես K<sub>1</sub> կոնտուրի ինքնինդուկցիոնի կոճ: C<sub>2</sub>-այդ կոնտուրի փոփոխ պարունակման խտացուցիչն ե՝ 400-700սմ. պարունակումով: Φ-փոփոխիչն ե՝ վոլորների և 15 կոնտակտների, վորոնց միացրած են շրջանակ-կոճի վոլորներից լեկող լարերը: C<sub>1</sub> գրիգիկի կոնդենսատորն ե 175-200 սմ պարունակումով: R-գրիգիկի կորուստի դիմա-

1) Գրիգիկը կազմված ե լինում 1 դիմադրությունից և սեկ կոնդենսատորից. Ներկա դիպքում C<sub>1</sub> կոնդենսատորը և R դիմադրությունը միասին կազմում են գրիգիկը. Գրիգիկը գուծ ե ածվում, վորպեսզի ստացվող ձայնն աղմուկներ չպարունակի: Ճ. թ.

դրությունն ե 3-5 մեգոմ դիմադրությամբ: C 4-բլոկ-խտուցուցիչն ե 800-1000 սմ պարունակումով: Խ-շիկացման սովորական ռեզուստատն ե՝ 25 սմ դիմադրությամբ: Պոտ.- պոտենցիոմետրն ե՝ 400-500 սմ դիմադրությամբ:



Նկ. 2.

Մ.շ.-լամպի շիկացման մարտկոցն ե 4, 5 Վ լարումով: Մ.ա.-անողի մարտկոցն ե 4 Վ լարումով:

Սքեմայում կտ մի տուանձին K<sub>2</sub> կոնտուր ել: Այս կոնտուրի L<sub>2</sub> կոճերը պետք ե ունենան միքանի հազար վոլորներ, իսկ C<sub>2</sub> կանդենսա-

ՏՐՈՐ պետք ե ունենա մինչ 2000 ոմ պարունակում:

Ալդ Լ<sub>2</sub> կոճը փոխարինում են տելեֆոնի խողովակի կոճով, վորի դիմադրությունն ե 2100 ոմ, Բոժկո, Ռեկորդ և ալլ բարձրավասների կոճով:

Այս սքեման, չնորհիվ Հ<sub>2</sub> կոնսուրի ներկայության, պատկանում ե, արակես կոչված՝ գեր կամ սուպեր-գեներատիվ սքեմաներին, վորոնք շատ զգայուն են թույլ սիգնալներին<sup>1)</sup>. Սքեմաի առանձնահատկությունն այն է, վոր լարելու համար ծառայող C<sub>2</sub> կոնդենսատորն անմիջապես միացրած ե՝ լամպի ցանցը և զրիդիկի C<sub>1</sub> կոնդենսատորը միացնող լարին. դրանից ամբողջ սրբեմալի աշխատանքը դառնում ե ավելի կայուն<sup>2)</sup>, քան սովորական գերուեցեներատիվ սքեմաների աշխատանքը: Բացի ալդ, դրանից զգալի կերպով պահանջում ե լարվածքի փոփոխականությունը, վերջինս սքեմալի համար շատ կարևոր հատկություն ե, վորովհետև իթե լարվածքը շուտ-շուտ պահանջում է վարչիք լինից լարելու), ալլ ևս փոփոխի (կարէք լինի նորից լարելու), ալլ ևս

1) Նշանակում ե՝ թույլ սիգնալները վեր են ածում բարձր հաճախականության տատանումների: Գեներացիա նշանակում ե ծնունդն բարձր հաճախականության տատանումների: ծ. թ.

2) Նշանակում ե աղմուկ չի լինում: ծ. թ.

հստավոր չի լինի ճանապարհ գնալիս ընդունում կատարել:

Սքեմալի արժանիքներից մեկը պիտի համարել նաև այն, վոր նրա մեջ ՄԴԸ լամպն ընդունում ե տալիս, իբրև անողի լարումը հավասար ե լինում մոտ 4 վոլոտի: Վերջինս շարժիկի համար առանձնապես կարևոր ե, վորովհետև նա այլ ևս կարիք չունի հետը ման ածելու անողի ծանր (80 վոլտանոց) մարտկոց:

Այստեղ (ինչպես և պեգադինի<sup>1)</sup> մեջ) ուեգեներացիալի կանոնավորումը կատարում են փոփոխելով լամպի շիկացումը, վորի համար, նախ՝ Ուեռուտատով կատարում են կոպիտ կանոնավորում (ուեգուլիրովկա, ապա՝ ճիշտ կանոնավորումը կատարում են (պոտ.) պոտենցիոնետրով, վոր Ուեռուտատի հետ ներարկված ե շղթալի մեջ զուգահեռաբար: Բայց մեր սքեմալում մենք կա-

1) Ընդունիչ եւ ծ. թ.

2) Յեթե սիգնալները ճիշտ են վերաբարդվում անողի շղթալում (թիթեղում), ավելի լին ուժեղանում մարտկոցի հաշվին: Այդ եներգիայի մի մասը տեղափոխվում ե ցանցի շղթալին. դրանից սիգնալներն ավելի լին ուժեղանում: Եներգայի ալդ աեղափոխումը անողի թիթեղից ցանցի շղթային՝ սիգնալներն ավելի ուժեղացնելու նպատակով՝ կոչվում ե հակադարձ կապ կամ ուղեներացիա (ГАРРИС, АЗБУКА РАДИО): ծ. թ.


Նոնավորումը կատարում ենք գեռեզներացիա-  
յից հետո, վորի ներկայության մասին մեզ  
իմաց ե տալիս տեղեփոնում լսվող նուրբ սուլոցը:

### ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆ

Շարժիկը, ինչպես և ամեն մի գործիք, վոր  
յենթակա լե հաճախտկի տեղափոխումների, պետք  
ե բավարարի հետեւալ լերեք պահանջները. ա-  
ռաջին՝ պետք ե ամուռ լինի թե դրսից և թե  
ներսից, վորպեսզի զանազան հարվածներ ու  
ցնցումներ չանդրադառնաննրա աշխատանքի վրա.  
լեկրորդ՝ պետք ե հարավորին չափ փոքր ծա-  
նրություն ունենա, թեթև լինի. և լերրորդ՝  
արտաքինով պետք ե հարսար լինի տեղափոխու-  
թյան:

Ինչ վերաբերում ե ամրության, ալդ ամրող-  
ջովին կախված ե դետալների ամրությունից և  
սիրողի աշխատելու ունակություններից: Քաշի  
փոքրացումը կախված ե շարժիկը կազմող դե-  
տալների քաշի փոքրությունից: իսկ լերրորդ  
պահանջը միանգամայն բավարպում ե մեր  
ցուց տված արտաքին ձևով, աւտինքն, վոր շար-  
ժիկը շինված լինի ձեռքի շեմոդանի (պայուսա-  
կի) մեջ, վորը նրան կպաշտպանի զանազան  
մշասումներից, վոր կարող են պատահել ճանա-  
պարհին: մըսնույն ժամանակ, շատ հարսար ե

տեղափոխության համար; և ունի վայելուչ ար-  
տաքին աեսք:



Նկ. 3.

Շարժիկն ամրողապես տեղափորված ե պա-  
յուսակում (տես նկ. 1 - շարժիկի ընդհանուր տեսա-  
քը), ինչպես վերն ասացինք, նույն պայուսակի  
մեջ տեղավորված են նույնպես և մարտկոցներն  
ու տելեֆոնի խողովակը: Յերբ ընդունում չի  
կատարվում, շարժիկը փակում են և նա սովորա-  
կան չեմողանի տեսք ե ընդունում:

ԴԵՏԱԼՆԵՐԸ.

Շարժիկը հավաքելու համար անհրաժեշտ դե-  
տաները գնում եք պատրաստի: ինքներդ պիտի  
պատրաստեք միան մոնտաժի պանելը (տախտա-  
կի), վորի վրա ամրացվելու լեն դետալները,  
մեկ ել այն կարկառը (հրաքը կամ խեմքը), վորի  
վրա ամրացվում ե շրջանակ - կոճը:

Նկ. 4-ում տրված են մոնտաժի պանելների մոտավոր չափսերը. բայց ամեն սիրող, իհարկե, կարող ե անձամբ վերջնաշապես վորոշել պանելների չափսերը՝ նայած իր ունեցած պայուսակին և գետալներին:

Ընդունող շրջանակի պատրաստելու մասին կարիք կա ավելի մանրամասն պատճեր:

### ՇՐՋԱՆԱԿԸ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ.

Շրջանակը փաթաթում են մի կարկասի վրա, վոր սղոցում են բարակ ֆաներից (չափսերը տված են նկ. 3-ում). այդ ֆաների մեջ 9 կտըրվածք եք անում, վորոնց մեջ փաթաթելու ժամանակ դնում եք պղնձալարը:

Փաթաթելու ժամանակ լարն անց եք կացնում կարկասի ճեղքերով. շնորիվ ալդ ճեղքերի կենտթվի, լարն ամեն անդամ անցնում ե մերթախտակի մի լերեսով, մերթ մլուս լերեսով: Մի վորոր համարվում ե լարի մի ամբողջ շրջանը: Այսպիսով, վորոների թիվը հաշվում են՝ տախտակի մի լերեսին գտնվող վորոների թիվը բազմավատկելով լերկուսով:

Ընդամենը շրջանակի վրա պետք ե փաթաթել լարի 150 վորոր (ուրեմն, կարկասի ամեն մի լերեսին կլինի 75 վորոր), լարի տրամագիծը պետք ե լինի 0, 3 մմ: Ցանկալի լե, վոր լարն

ունենալ մետաքսե մեկուսացում, բայց կարելի լե նաև բամբակի թելից կրկնակի մեկուսացում ունենալ (այդպիսի մեկուսացումը ոռուերեն կրճատ կոչում են ՊԲԴ проволկա ս բույակությունունու առաջարկություն):

Փաթաթելուց առաջ ֆաներից պատրաստած կարկասը կարելի լե շելլակով պատճել, իսկ լարը վոչ մի գեպքում չի կարելի շելլակով պատճել, վորովինետև շրջանակի փաթաթվածքի ներքին պարունակումը (տարողությունը) շատ վատ ե անդրադառնում սքեմակի աշխատանքի վրա: Նույն պատճառով փաթաթվածքը կատարելիս վոլորը վոլորին շատ կիպ չպետք ե դնել:


Շրջանակից բերում եք 15 ծալրեր, վորի համար փաթաթվածքի ժամանակ ամեն մի 10 վոլորից հետո լարը վոլորում, 5 — 10 սմ լերկարությամբ մերակ<sup>1</sup>) եք անում. հենց այդ մերակն ե, վոր պիտի ծառալի, վրապես շրջանակից բերած ծալր: Ընդամենն անում եք 14 հատ մերակ. վորպես 15-րդ ծալր կծառալի փաթաթվածքի վերջին ծալրը:

### ՄՈՒՏԱԺ

Նկ. 4-ում տրված ե ընդունիչ-շալքիկի մոնտաժի սքեման:

1) Петля.

Շարժիկը հավաքելու համար սղոցում են մի տախտակ, վորի չափսերը պիտի լինեն  $200 \times 190$  մմ. դա կծառայի վորպես մօնտաժի հիմնական պանել՝ նրան շուռուալներով կամ սոսնձով կը լց-




Նկ. 4

նում են կողքի պանելը և այն տախտակը, վորի վրա հաստատում են լամպը և գրիդիկի կորուստի կանգնակը (ստոյկա):

Հիմնական պանելում ցանկալի լե անել մի բացվածք (կտրվածք) այն հաշվով, վոր նրա

չիջով կտրելի լինի դիտել լտամպի շիկացումը (տես նկ. 5):

Բերված գծագրերի համաձայն, պանելի վրա ամրացնում եք՝ ռեստատը, պոտենցիոմետրը, փոփոխական պարունակման կոնդենսատորը, լամպի պանելը, սեղմակները և ալն. փոփոխա-



Նկ. 5

կան պարունակման կոնդենսատորը պետք է այնպես տեղափորել, վոր պանելի տակ տեղ մնա մնման մարտկոցների համար. վորպես մնման մարտկոցներ ծառայում են գրպանի լտամպերի լերկու մարտկոցներ. Միացումները կատարում եք ոգտվելով մօնտաժի և պրինցիպիալ (սկրզբունքալին) սքեմաներից. Միացումները պետք է կատարել մեծ խնամքով, պետք է կատարել կոշտ մօնտաժ, ցանկալի լե՝ զոդումներով (այսինքն՝ լարերի ծալքերը իրար հետ զոդել կա-

լեկով), յեթե լարը մեկուսացրած չե, պետք է դնել ռետինե խողովակների մեջ։ Շրջանակն ընդունիչի հետ միացվում ե փափուկ շնուրով։

Փոփոխիչն ու կոնտակտներն ամրացվում են շրջանակի կարկասի մեջտեղում։ Շնուրներից մեկը գտիս ե փոփոխիչից, մյուսը՝ շրջանակի սկզբից, ու միացվում են (ներարկվում են) սքեմալի համապատասխան տեղերին։

Վերջում, ասենք՝ յեթե սիրողին հաջողվե տախտակի մեջ համապատասխան տեղ բացել, այդ գեպը ունի յանկալի յե լամպի շիկացման համար զնել վոչ թե դրանի մարտկոց, այլ, որինակ, ԻԴ տիպի ելեմնեա՞ 3 հատ։

### ՀԱՐԵԼՆ ՈՒ ԿԱՐԳԻ ԳՑԵԼԸ

Շարժիկի լարելը կտարարվում ե շատ հաստրակ։ Ոեստատը պատելով վառում եք լամպը և ընդունիչը հասցնում եք գերբեգեներացիալի, վորի հասնելու (կամ ներկայության) մասին համոզվում եք, յերբ տելիքոնում լսվում ե բորձը սուլոցը. դրանից հետո փոփոխիչով ու կոնդենսատորով լարում եք ու ձեր ընդունիչը հարմարեցնում յանկալի կալանի ալիքին։ Յերբ կայանը գտնում եք, պոտենցիոմետրով կանոնավորում եք շիկացումը և կոնդենսատորին հար-

կավոր բացվածքը տալով (սրան ել ևն առում «լարել», - ՊՕԾՏՐՈЙՔ) աշխատում եք ստանալ ամենաբարձր ընդունումը (վորը կոնենա և ամենամեծ հաճախականությունը)։

Առանձնապես կարգի զցել շարժիկը չի պահանջում։ Յեթե շարժիկի մեջ ձեր դրած կոնդենսատորներն ունեն մեր ցուց տված մեծությունները, և գերուեգեներացիա չի առաջանում, փորձեցեք փոխել Ը<sub>3</sub> կոնդենսատորը, վորի պարունակումը, նախած լամպի հատկություններին և Լ<sub>2</sub> կոճի տիպին, կտրող ե տատանվել 1700. ից մինչ 2200 սմ.ի սահմաններում։ Նույնպես լավ արդյունք կտարացվի, յեթե կարողանաք հաջողությամբ ընտրել Ը<sub>4</sub> բլոկ-կոնդենսատորը, վորի պարունակումը նույնպես տատանվում ե 500. ից մինչ 1000 սմ.ի սահմաններում։

Յեթե շատ փոթորկոտ գեներացիա յե տուաջանում, պետք ե կորստի դիմաղը ությունը փոքրացնել մինչ 1—2 մետոմ։

Վերջում տաենք, վոր կանոնավոր աշխատող շարժիկը տալիս ե այնպիսի բարձրություն, ինչպիսին տալիս ե միջակ աշխատող դետեկտորալին ընդունիչը, կարճ ասած, այնպիսի բարձրություն, վոր միանգաման բավարար ե առանց լսողությունը լարելու լսել ծրագիրը՝ յերկու ա-

11.888

կանջի տելեֆոնով։ Այդպիսի շարժիկով աշխատելու պրակտիկան ցուց ե տվել, վոր նրանով հնարավոր ե ընդունել հաղորդումներ՝ արտասահմանան մի քանի հզոր կայաններից։

ՀՀ Ազգային գտածություն



NL0270615

Սրբագրեց ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գլուխիս № 2926 Պատվել № 2998 Հրատ. № 2374 Տիրաժ 2000

Պետրաշի Տպարան

Երեկան

Հանձնված է արտադրության 20 IX 1932 թ.  
Ստորագրված է տպագրելու 9 XII 1932 թ.  
ՍԱ, Ֆ. Բ.